

ՔՐԵԱԿԱՆ ՂԱՏՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՐԻՄԻՆԱԼԻՍԻԿԱ

**«ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԶԵՎԻ ՏԱՐԲԵՐԱԿՈՒՄ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ
ԸՄԲՈՆՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ**

ԳԵՎՈՐԳ ԲԱՐԴԱՍԱՐՅԱՆ

Դատավարական ձևը քրեական դատավարության կենտրոնական հասկացություններից մեկն է: Որպես հիմնարար կատեգորիա՝ այն շարունակ եղել է իրավաբան գիտնականների ուշադրության կենտրոնում: Հատկապես ուշագրավ են քրեադատավարական ձևի տարբերակնան թույլատրելիության հիմնահարցի վերաբերյալ ավելի քան չորս տասնամյակ առաջ սկսված գիտական քննարկումները:

Նշենք սակայն, որ մասնագետները ընդհանուր գծերով շոշափում էին միայն քրեադատավարական պարզեցման թույլատրելիության հարցը. դրա սահմանները, դատավարության մասնակիցների իրավունքների ապահովման երաշխիքների տեսանկյունից հնարավոր դրական և բացասական ազդեցությունը: Մինչդեռ դատավարական ձևի տարբերակնան էռությանը, «տարբերակված քրեադատավարական ձև» հասկացությանը և դրա չափանիշներին վերաբերող հարցերը քննարկման առարկա չեն հանդիսանում: Այնինչ քրեադատավարական ձևի տարբերակնան թույլատրելիության կամ անթույլատրելիության մասին հիմնավոր եզրահանգումը հնարավոր է միայն դրա էռության, հնարավոր դրսևորումների և տարբերակված դատավարական ձևերի առանձնահատկությունների համակողմանի ուսումնասիրության հիմնան վրա: Անդրադառնանք նշված հարցերին:

Իրավաբանական գրականության մեջ «քրեադատավարական ձև» «տարբերակում» հասկացության վերաբերյալ միասնական մոտեցում չկա: Մի դեպքում այն դիտվում է որպես մեթոդաբանական սկզբունք կամ մեթոդ, մեկ այլ դեպքում՝ որպես քրեական դատավարության մոդել (ռազմավարություն): Մի շարք հեղինակներ ել այն համարում են քրեական դատավարության կազմակերպման ձև:

Դատավարական ձևի տարբերակումը որպես մեթոդաբանական սկզբունք կամ մեթոդ: Ա. Ա. Սիչևը դատավարական ձևի տարբերակումը և ունիֆիկացումը համարում է քրեական դատավարության մեթոդաբանական սկզբունքներ: Յեղինակի կարծիքով, ունիֆիկացումը դատավարության սկզբունք է, որն ուղղված է քրեական դատավարության կատարյալ կառուցվածքի ստեղծմանը, ընդհանուր ունիվերսալ կանոնների ձևավորմանը: Տարբերակման սկզբունքը, ըստ Սիչևի, հիմնվում է առավելապես էմպիրիկ հիմնավորումների վրա, որոնք համապատասխանում են տվյալ պատմական ժամանակաշրջանին: Տարբերակման միջոցով փորձ է արվում հեռանալ միասնականության սկզբունքից՝ հանուն ընթացիկ կենսական հանգամանքների: Այսպիսով, տարբերակումը սկզբունք է, որն ի

սկզբանե ուղղված է ընդհանուր կանոններից բացառություններ ձևավորելու¹: Յեղինակի կարծիքով, միասնականության և տարբերակման սկզբունքները գտնվում են անքակտելի դիալեկտիկական փոխկապվածության մեջ: Մի կողմից տարբերակումը հնարավոր է միայն սովորական (միասնական) ձևի առկայության պարագայում, մյուս կողմից՝ ցանկացած ունիֆիկացում առավել ընդհանուր օբյեկտի տարբերակման արդյունք է: Միասնական քրեական վարույթը կարելի է ներկայացնել որպես առավել խոշոր երևոյթի՝ միասնական իրավաբանական վարույթի տարբերակման արդյունք: Այդպիսի տարբերակման հետևանքով առաջացել են քրեական և քաղաքացիական դատավարությունները: Քաղաքացիական դատավարությունից առանձնացել են արբիտրաժային և վարչական դատավարությունները: Նշված օրինաչափությունը, ըստ հեղինակի, անբողջությամբ դրսերպում է նաև քրեական դատավարության շրջանակներում²:

Այսպիսով, Ա. Ա. Սիչևի մոտեցման շրջանակներում քրեադատավարական ձևի տարբերակումը և ունիֆիկացումը դիտարկվում են որպես քրեական դատավարության մեթոդաբանական սկզբունքներ, որոնք գտնվում են դիալեկտիկական հարաբերակցության մեջ: Քրեադատավարական ձևի տարբերակումն ու ունիֆիկացումը, փաստորեն, դիտվում են որպես միասնական գործընթաց, որը պայմանավորված է քրեական դատավարության զարգացման կոնկրետ փուլով: Դրանք միասնական են այնքանով, որքանով զարգացման միասնական գործընթացի դրսերում են: Տարբերակումն ու ունիֆիկացումը դիտվում են որպես վերարտադրության օրինաչափ գործընթացներ: Դատավարության միասնական ձևից բացառությունները, որպես տարբերակման արդյունք, ձգտում են ինքնուրույնության, ինչի շնորհիվ դրանք բացառություններից վերածվում են ինքնուրույն և միասնական դատավարական ձևի, այսինքն՝ այնպիսի ձևի, որը միասնական է դեպքերի որոշակի շրջանակի համար: Ընդհանուր կարգից բացառությունները քրեադատավարական ձևի տարբերակման մոտակա արդյունքն են, իսկ վերջնական արդյունքը արդեն միասնական քրեադատավարական ձևն է:

Յեղինակն առանձնացնում է առաջնային և երկրորդային տարբերակում: Առաջնային տարբերակումը նոր քրեադատավարական ձևի ամբողջացման գործընթաց է: Դրա մասին կարելի է խոսել այն ժամանակ, երբ տարբերակման արդյունքում առանձնացված մասը սկսում է ունիֆիկացման սկզբունքի հիման վրա ձևավորել իր համակարգային միասնականությունը: Երկրորդային տարբերակումը միասնականացված ձևի մասնատման գործընթացն է³:

Փաստորեն, Ա. Ա. Սիչևը տարբերակման և ունիֆիկացման միասնական, այսպես կոչված, վերարտադրողական գործընթացում առանձնացնում է առաջնային տարբերակումը, որն առկա է գոյություն ունեցող միասնական դատավարական ձևից որոշակի առանձնահատկությունների առանձնացման ժամանակ: Նշված առանձնահատկությունները ունիֆիկաց-

¹ С্�т. Сычев А. А. Дифференциация уголовно-процессуальной формы производства по делам несовершеннолетних. Автореф. дисс. ... к. ю. н., Н. Новгород, 2009, л. 10:

² Ст. 601 УПК РФ, ч. 11:

³ Ст. 601 УПК РФ, ч. 12:

ման մեթոդաբանական սկզբունքի միջոցով ձևավորում են իրենց համակարգային ամբողջականությունը՝ որպես նոր միասնական դատավարական ձև: Իսկ վերջինիս տարբերակումն էլ հանդիսանում է երկրորդային տարբերակում: Մեր կարծիքով, Ա. Ա. Սիչևն այս մոտեցման մեջ դատավարական ձևը չի սահմանազատում վարույթի տեսակից, քանի որ հեղինակը նոր տեսակի վարույթի առաջացման գործընթացը համարում է դատավարական ձևի առաջնային տարբերակում:

Դատավարական ձևի տարբերակումը որպես սկզբունք է դիտում նաև Դ. Պ. Վելիկին: Նա խոսում է օպտիմալ կազմակերպման և տարբերակման սկզբունքի մասին, որից բխում են հետևյալ դրույթները.

1. առանց անհարկի ճգճգումների դատապարտվելու իրավունք,
2. այն դատարանի կողմից դատապարտվելու իրավունք, որին գործն ընդդատյա է օրենքով,
3. կասկածյալի կամ մեղադրյալի իրավունքը՝ որոշ դեպքերում ընտրելու վարույթի դատավարական ձևը,
4. վարույթը նախաձեռնելուց հրաժարվելու կամ հաշտվելով գործի վարույթն ավարտելու՝ տուժողի իրավունքը:

Դրանից բացի՝ հեղինակը փաստարկում է միասնական քրեական դատավարության շրջանակներում դատավարական ձևի տարբերակման հնարավորությունը: Նրա կարծիքով, քրեական դատավարության միասնականությունն ապահովվում է քրեադատավարական օրենսդրության, քրեական դատավարության խնդիրների, քրեական դատավարության սկզբունքների և դատական համակարգի միասնականությամբ:

Դ. Պ. Վելիկին դատավարական ձևի տարբերակում ասելով հասկանում է միասնական դատական համակարգի, միասնական քրեադատավարական օրենսդրության շրջանակներում և միասնական սկզբունքների վրա միասնական խնդիրները տարբեր եղանակներով լուծելու հնարավորություն⁴: Այսինքն՝ հեղինակը դատավարական ձևի տարբերակումը հնարավոր է համարում քրեական դատավարության միասնականության պայմաններում:

Տարբերակված դատավարական ձևը որպես քրեական դատավարության մոդել (ռազմավարություն): Քրեական դատավարության մոդելների վերաբերյալ տեսական տարբեր մոտեցումների համադրմամբ գրականության մեջ առանձնացվում են քրեադատավարական վեց ռազմավարություններ (ընդհանուր մոդելներ):

1. մեղադրյալի իրավունքների և ազատությունների պաշտպանություն,
2. քրեական հետապնդում,
3. մեղադրյալի սոցիալական օժանդակություն,
4. տուժողի սոցիալական օժանդակություն,
5. քրեական դատավարության ռացիոնալություն և արդյունավետություն,
6. հաշտեցում⁵:

⁴ Տե՛ս Վելիկի Դ. Պ. Եдинство и дифференциация уголовно-процессуальной формы: история, современность, перспективы. Дисс. ... к. ю. н., М., 2001, էջ 211:

⁵ Տե՛ս Стойко Х. Г. Уголовный процесс западных государств и России: сравнительное теоретико-правовое исследование англо-американской и романо-германской правовых систем. Автореф. дисс. ... д. ю. н., СПб., 2007, էջ 23:

Ս. Ս. Ստոյկոն նշում է, որ քրեական դատավարության ռացիոնալության և արդյունավետության ռազմավարությանը համապատասխանում է «բյուրոկրատական» արդյունավետության մոդելը: Այն արտացոլում է քրեական դատավարության վրա քրեական արդարադատության մարմինների ճնշումը, որոնք փորձում են դրա մեջ ներմուծել խնայողական կանոններ և ընթացակարգեր: Այստեղ հիմնական նպատակն է կրօնատել ծախսերը, հասնել նրան, որ քրեական գործերը հնարավորինս արագ և արդյունավետ քննվեն դատարանում: Յիմնական գործառույթը քրեական դատավարության կառավարումն է: Յիմնական սկզբունքներն են՝ դատավարության ստանդարտացում, խնայողություն և աշխատանքի բաժանում, արագություն և պարզություն, հակասությունների նվազեցում և չեզոքացում⁶:

Ս. Ս. Ցիգանենկոն նշում է, որ քրեադատավարական ռազմավարությունն իրենից ներկայացնում է քրեական վարույթի ինքնուրույն մոդել, որը կոչվում է տարրերակած քրեական դատավարություն: Դրա նպատակը քրեական դատավարության ճկունության ապահովումն է, գործառույթը՝ քրեական դատավարության համակարգային-կառուցվածքային կազմակերպման զարգացումը, սկզբունքները՝ քրեադատավարական ծկի դիվերսիֆիկացիան, քրեական դատավարության ընդիհանուր կարգի գերակա դերը, քրեահրավական կատեգորիաների և հատկանիշների հիման վրա քրեական դատավարության ծերի կազմավորումը, քրեական դատավարության ծկի փոփոխությունների հավասարությունն ըստ բնույթի և աստիճանի⁷:

Այսպիսով, Ս. Ս. Ցիգանենկոն քրեադատավարական ծկի տարրերակումը համարում է նախ՝ քրեական դատավարության իրավունքի զարգացման ուղղություն, ապա նաև՝ քրեադատավարական հարաբերությունների վրա իրավական ներգործության յուրօրինակ մեթոդ, որի կիրառումը հանգեցնում է քրեական դատավարության համակարգի կառուցվածքային փոփոխությունների՝ քրեական դատավարության մասնակիցներին ապահովելով իրենց իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտ և համարժեք միջոցներով: Իսկ դրանց համարժեքությունը կապված է արդեն ենթադրվող կատարված հանցագործության ծանրության հետ:

Դատավարական ծկի տարրերակումը որպես քրեական դատավարության կազմակերպման ծև: Ա. Վ. Միխինովը և Կ. Բ. Կալինովսկին նշում են, որ քրեադատավարական ծկի տարրերակումը քրեական դատավարության այնպիսի կազմակերպումն է, երբ դրա ընդիհանուր կարգից բացի, առկա են դատավարական ծեր, որոնք նախատեսում են ինչպես ոչ բարձր համրային վտանգավորություն ունեցող հանցագործությունների վերաբերյալ ոչ բարդ գործերով ընթացակարգի պարզեցում, այնպես էլ դրա բարդացում առավել վտանգավոր հանցագործությունների վերաբեր-

⁶ Տե՛ս նոյն տեղը:

⁷ Տե՛ս Պիգանենկո Ս. Ս. Дифференциация как модель уголовного процесса (уголовно-процессуальная стратегия). Материалы международной научной конференции, посвященной 160-летней годовщине со дня рождения проф. И. Я. Фойницкого, «Стратегии уголовного судопроизводства». М., 2008, էջ 200:

յալ գործերով կամ այն գործերով, որոնցով պահանջվում է մեղադրյալների կամ դատավարության այլ մասնակիցների օրինական շահերի դատավարական առավել պաշտպանվածություն⁸:

Ն. Նիկիտինայի կարծիքով, տարբերակումը քրեական գործերի բնության՝ բարդության աստիճանով իրարից տարբերվող, այդ թվում՝ պարզեցված ձև ունեցող ընթացակարգերի ձևավորումն է⁹:

Մ. Լ. Յակովլյանի միասնական քրեադատավարական ձևը բնութագրում է որպես վարույթի կարգ, որը ծառայում է միասնական նպատակի, հիմնվում է միասնական սկզբունքների վրա, նախատեսում է գործի փաստական հանգանանքների բացահայտման միասնական դատավարական միջոցներ, որոշումների միասնական ձևեր¹⁰:

Ս. Բ. Ռոսսինսկի կարծիքով՝ տարբերակել կարելի է յուրաքանչյուր դատավարական գործողություն կատարելու և որոշում կայացնելու կարգ¹¹:

Ինչպես տեսանք, քննարկվող դատավարական կատեգորիայի վերաբերյալ գիտական մոտեցումները խիստ բազմազան են:

Կարծում ենք, վերը նշված մոտեցումներից որևէ մեկը միանշանակ ընդունելի համարել չի կարելի: Դրանցում բախվում ենք քրեադատավարական ձևի հասկացության այն հիմնախնդիրների հետ, որոնք կապված են քրեական դատավարության և քրեադատավարական ձևի ու դատավարական կարգի և դատավարական ձևի նույնացման հետ: Սրանց սահմանազատումը և ընդհանրապես քրեադատավարական ձև հասկացության ճշշտ բնորոշումը ակնհայտորեն մեծ նշանակություն ունեն քրեադատարական ձևի տարբերակման և դրա արդյունքի՝ տարբերակված քրեադատավարական ձևի էլության պարզաբանման համար:

Կարծում ենք, տարբերակումը կարելի է դիտարկել երկու ասպեկտով՝ ընդհանուր և կոնկրետ ու առարկայական:

Ընդհանուր իմաստով քրեադատավարական ձևի տարբերակումը կարելի է համարել քրեական դատավարության զարգացման ուղղություն՝ հաշվի առնելով քրեական դատավարության օպտիմալացման, արդյունավետության բարձրացման այն միտումը, որը նկատելի է գրեթե ողջ աշխարհում, և որն իրականացվում է նաև քրեադատավարական ձևի տարբերակման միջոցով:

Իսկ եթե ավելի առարկայական մոտեցում ցուցաբերենք և տարբերակումը դիտարկենք ոչ թե ընդհանուր քրեական դատավարության զարգացման միտումների համատեքստում, այլ կոնկրետ քրեական դատավարության շրջանակներում և դրա առաջացրած արդյունքի տեսանկյունից, ապա «քրեադատավարական ձևի տարբերակում» հասկացության բնորոշնան համար պետք է հաշվի առնել երկու կարևոր հանգամանք:

⁸ Տես Սմիրնով Ա. Վ., Կալինովսկի Կ. Բ. Ուղղակի պատճենաբանություն: Եղանակ: Եղանակ ՀՀ ՀՀ կառավարության կողմէն 2008 թվականի մայիսի 20-ի թիվ 654-Ն հայոց օրու դրամագործության մասին օրենքում:

⁹ Տես Նիկիտինա Հ. Тенденции развития процессуальной формы в уголовном судопроизводстве России. www.law-n-life.ru/arch/143/143-12.doc:

¹⁰ Տես Յակոբ Մ. Լ. Процессуальная форма в советском уголовном судопроизводстве. Մ., 1981, էջ 35:

¹¹ Տես Ռոսսինսկի Ս. Բ. Уголовно-процессуальная форма: понятие и тенденции развития. Վեշտնիկ ОГУ, № 3 2006, էջ 142-143:

Նախ՝ տարբերակումը վերաբերում է քրեական դատավարության ձևին՝ որպես քրեական դատավարության կամ դրա կոնկրետ փուլի իրականացման եղանակի, և ոչ թե դատավարական կարգին՝ դատավարական գործունեությունը կոնկրետ ձևով իրականացնելիս առանձին դատավարական գործողությունների իրականացման օրենքով սահմանված եղանակին: Այսինքն՝ դատավարական ձևի տարբերակման մասին կարող ենք խոսել, եթե առկա է կոնկրետ փուլում քրեադատավարական գործունեության իրականացման նոր եղանակ, որն ամբողջությամբ տարբերվում է դատավարական մյուս ձևերից կամ ունի այնպիսի էական առանձնահատկություններ, որոնք այդ ձևին տալիս են նոր էություն: Իսկ մեկ դատավարական գործողություն կատարելու կամ որոշում կայացնելու կարգի փոփոխությունը կամ դատավարական ձևի մեջ մեկ գործողության ավելացումը կամ հակառակ՝ պակասեցումը դեռևս բավարար չեն դատավարական ձևի տարբերակման մասին խոսելու համար: Քրեադատավարական ձևը չի նույնանում քրեադատավարական գործողության կատարման կարգի հետ: Թեև ձև և կարգ եզրույթներն ունեն նույն լեզվական նշանակությունը, երկուսն էլ արտահայտում են ինչ-որ բանի կերպ, եղանակ, բայց եթե խոսում ենք դատավարական ձևի մասին, ապա նկատի ունենք կարևորագույն դատավարական կատեգորիա, որն արտահայտում է ավելին, քան ինչ-որ բանի կարգը: Ի տարբերություն «դատավարական կարգ» եզրույթի՝ «դատավարական ձևը» չի կարելի վերագրել առանձին դատավարական գործողություններին: Դատավարական ձևը ցույց է տալիս վարույթի առավել ընդգրկուն միավորի՝ քրեական դատավարության փուլի շրջանակներում դատավարական գործունեության իրականացման կարգը: Այլ կերպ ասած՝ «դատավարական կարգ» ասելով պետք է հասկանալ կոնկրետ դատավարական գործողության իրականացման՝ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված եղանակը, իսկ «դատավարական ձև» ասելով պետք է հասկանալ քրեական դատավարության որոշակի փուլում դատավարական գործունեության, այսինքն՝ դատավարական գործողությունների ամբողջության իրականացման եղանակը: Այս իմաստով, դատավարական ձևը դատավարական կարգերի ամբողջություն է:

Տարբերակումը չի կարող վերագրվել նաև քրեական դատավարությանը: Մինչդեռ ներկայացված մոտեցումներում կամ ուղղակիորեն խոսվում է քրեական դատավարության տարբերակման, կամ դատավարական ձևի տարբերակման հետևանքով քրեական դատավարության ինքնուրույն տեսակների առաջացման մասին:

Մեկ այլ դեպքում տարբերակումը վերագրվում է նույնիսկ քրեադատավարական օրենքին¹²:

Քրեադատավարական ձևի տարբերակումը չի երկատում քրեական դատավարությունը, չի առաջացնում քրեական դատավարության երկու կամ ավելի տեսակներ: Քրեական դատավարությունը շարունակում է լինել միասնական՝ անկախ որևէ չափանիշից՝ ունենալով միասնական նպատակներ և իրականացվելով միասնական սկզբունքներով: Տարբերակման

¹² Ст. Кузнецов П. Дифференциация процессуальной формы по групповым и многоэпизодным делам. «Российская юстиция». 1999, № 5, № 44:

հետևանքով առաջանում են միասնական քրեական դատավարության իրականացման, դրա նպատակների նվաճման տարբեր՝ կոնկրետ իրավիճակին համարժեք եղանակներ:

Երկրորդ՝ քրեադատավարական ձևի տարբերակման մասին խոսելիս պետք է նկատի ունենալ, որ այն կարող է գոյություն ունենալ վարույթի կոնկրետ տեսակի շրջանակներում: Այսինքն՝ տարբերակել կարելի է վարույթի կոնկրետ տեսակի իրականացման ձևը: Սա կարևոր է վարույթի տարբեր տեսակները տարբերակված քրեադատավարական ձևի հետ չնույնացնելու համար:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համակարգային վերլուծությունից կարող ենք առանձնացնել քրեական վարույթի հետևյալ երեք տեսակները.

ա) քրեական գործով վարույթ, այսինքն՝ քրեական գործի քննությունը, որի առարկան մեղադրանքն է, և որի հիման վրա դատարանը պետք է որոշի անձի մեղավորությունը կամ անմեղությունը,

բ) միջանկյալ և լրացուցիչ վարույթներ, այսինքն՝ վարույթներ, որոնք իրականացվում են քրեական գործով վարույթի ընթացքում կամ դատավճռի կատարման փուլում դատավարության մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար,

գ) հատուկ վարույթներ:

Մրանցից որևէ մեկը մյուսի տարբերակման արդյունք չէ և ոչ էլ տարբերակված դատավարական ձև, այլ վարույթի ինքնուրույն տեսակ է: Եվ առհասարակ, վարույթի ինքնուրույն տեսակները, որպես դատավարական գործունեության իրականացման՝ միմյանցից եական տարբերություններ ունեցող տեսակներ, չեն ստեղծվում կամ առաջանում դրանցից մեկի կամ մյուսի իրականացման ձևի տարբերակման հետևանքով, այլ պայմանավորված են որոշակի իրավունքները այդ եղանակով պաշտպանելու անհրաժեշտությամբ: Վարույթի մի տեսակը մյուսի տարբերակման հետևանքով չի կարող առաջանալ թեկուզեկ այն պատճառով, որ դրանք ունեն տեսակորոշիչ առանձնահատկություններ: Այսպես, օրինակ, քրեական գործերով վարույթն իրականացվում է մեղադրանքի կապակցությամբ՝ պարզելու համար անձի մեղավորությունը կամ անմեղությունը, իսկ միջանկյալ վարույթները իրականացվում են դատավարության ընթացքում՝ դրա մասնակիցների առանձին իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունից ելնելով. օրինակ, երբ բողոքարկվում է քրեական հետապնդման մարմնի գործողությունը (ՀՀ քր. դատ. օր.-ի 290 հոդված): Միջանկյալ այս վարույթը քրեական գործով վարույթի՝ որպես վարույթի իմանական տեսակի տարբերակման հետևանքով առաջացած տեսակ չէ, այլ հանդես է գալիս որպես ինքնուրույն տեսակ, քանի որ ունի այնպիսի եական տարբերություն, ինչպիսին առարկան է, որն առաջին դեպքում առաջադրված մեղադրանքն է, իսկ երկրորդ դեպքում՝ դատավարական կոնկրետ գործողության կամ որոշման հետևանքով կոնկրետ իրավունքի խախտման վաստեց: Իհարկե, որպես միասնական քրեական դատավարության շրջանակներում իրականացվող դատավարական գործունեության ինքնուրույն տեսակներ՝ դրանք ունեն նաև ընդհանրություններ, քանի որ պատկանում են միևնույն հայեցակարգին, իրականացվում են միևնույն սկզբունքով:

Տեսականորեն տարբերակված քրեադատավարական ձևը կարող է գոյություն ունենալ վարույթի տեսակներից յուրաքանչյուրի շրջանակներում, այսինքն՝ քրեական վարույթի նշանակած տեսակներից յուրաքանչյուրի հրականացման դատավարական ձևը կարող է տարբերակվել:

Այսպիսով, կարծում ենք, քրեական դատավարության շրջանակներում իրականացվող դատավարական գործունեության իրականացման ձևի մեջ գոյություն ունեցող առանձնահատկությունները դատավարական ձևի տարբերակիչ չափանիշներ համարելու համար անհրաժեշտ են հետևյալ պայմանները.

1. դրանք պետք է լինեն էական, վերաբերեն դատավարական ձևին և ոչ թե դրա բաղկացուցիչ մաս կազմող կոնկրետ դատավարական գործողության կատարման կարգին,

2. դրանք պետք է գոյություն ունենան վարույթի միևնույն տեսակի շրջանակներում, չպետք է պայմանավորեն վարույթի ինքնուրույն տեսակի առանձնացումը:

Դժվար չէ տեսնել, որ նշանակած երկու չափանիշները տրամադրության հակադիր են մեկը մյուսին, քանզի գտնվում են հակադարձ բներներում:

Այսպես, տարբերակված քրեադատավարական ձևի գոյության մասին խոսելու համար անհրաժեշտ է, որ նի կողմից դատավարական գործունեության իրականացման կարգի տարբերությունները չկրեն մասնավոր բնույթ, չինագեն միայն այդ գործունեության բաղկացուցիչ մաս կազմող կոնկրետ դատավարական գործողություն կատարելու կամ որոշում կայացնելու կարգի առանձնահատկություններին, այլ լինեն ընդիանուր և էական այն աստիճանի, որ առանձնահատուկ դարձնեն ամբողջական դատավարական գործունեության իրականացման եղանակը:

Մյուս կողմից՝ այդ տարբերությունները չպետք է վերաբերեն վարույթի կոնկրետ տեսակի տեսակորոշիչ հատկանիշներին, այլապես կարող ենք խոսել ոչ թե տարբերակված քրեադատավարական ձևի, այլ քրեական վարույթի ինքնուրույն տեսակի մասին:

Ենթավարական վերը ասվածից՝ կարող ենք եզրակացնել, որ քրեադատավարական ձևի տարբերակումը քրեական գործով վարույթի կոնկրետ տեսակի իրականացման լրացուցիչ, ընդիանուր կարգից առանձնահատկություններ ունեցող ձևի կամ ձևերի նախատեսումն է, իսկ ավելի ստույգ՝ քրեական դատավարության ձևի տարբերակումը քրեական վարույթի կոնկրետ տեսակի իրականացման մեկից ավելի ձևերի գոյությունն է:

Կարծում ենք, «քրեադատավարական ձևի տարբերակում» հասկացության հենց այսօրինակ ընկալումն էլ պետք է ընկած լինի տարբերակման անհրաժեշտության, թույլատրելիության, ինչպես նաև դատավարական ձևի տարբերակման ճանապարհով քրեական դատավարության կատարելագործմանն ուղղված կոնկրետ միջոցների վերաբերյալ գիտական քննարկումների հիմքում:

ГЕВОРГ БАГДАСАРЯН – К понятию “дифференциация уголовно-процессуальной формы”. – Статья посвящена одной из актуальных проблем теории уголовного процесса – содержанию понятия “дифференциация уголовно-

процессуальной формы". Исследуются три основных подхода к этому понятию, а по результатам исследования предлагается новое его определение, причём особо подчёркивается, что совершенно недопустимо смешивать и отождествлять понятие "процессуальная форма" с понятиями "процессуальный порядок" и "вид процесса".

В статье делается вывод, что дифференциация уголовно-процессуальной формы не что иное, как наличие нескольких форм произведения конкретного вида уголовного процесса.

GEVORG BAGHDASARYAN – *Some Issues with Regard to the Concept of "Differentiation of Criminal Procedural Form".* – One of the actual problems of the theory of the criminal process – the purport of the concept of "differentiation of criminal procedural form" is discussed in the article. Three main approaches to the concept of "differentiation of criminal procedural form" are discussed by the author. As a result of the analysis of these approaches the author suggests his own definition of the concept of "differentiation of criminal procedural form". For the precise definition of this concept, the author emphasizes the inadmissibility of identification of the concept "procedural form" with the concepts "procedural order" and "kind of process".

The author concludes that differentiation of the criminal procedural form is the presence of several forms of performing of the concrete kind of the criminal process.